Արձանագրություն №7

«Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2020 թվականի կարիքների համար բջջային հեռախոսների՝ սմարթֆոնների ձեռքբերման նպատակով «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Աբովյան 13.07.2020թ. ժամը 15:00

Նիստին մասնակցում էին՝

նախագահ՝ Անուշ Խաչատրյան

անդամներ՝ Յանա Ալեքսանյան, Գագիկ Մաթևոսյան

Քարտուղար՝ Աննա Չոբանյան

1.Տեղեկություններ հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

Անուշ Խաչատրյան

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Էլ. հասցե
1	«Վերիտաս» ՍՊԸ	veritasllc1@gmail.com
2	Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի	Hovhannisyan8118@gmail.com
3	«Վեոն Արմենիա» ՓԲԸ	corp_tender@beeline.am
4	«Նոութբուք Սթոր» ՍՊԸ	info@redstore.am

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

2.Տեղեկություններ հայտեր պարունակող ծրարները սահմանված կարգով կազմելու և ներկայացնելու համապատասխանության մասին

Անուշ Խաչատրյան

2.1 Մասնակիցների կողմից ներկայացրած ծրարները կազմված և ներկայացված են սահմանված կարգին համապատասխան:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանության մասին

Անուշ Խաչատրյան

3.1 Մասնակիցների կողմից ներկայացրած ծրարներում պահանջվող փաստաթղթերը առկա են և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

4. Մասնակիցների կողմից առաջարկված գների մասին

Անուշ Խաչատրյան

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակից	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով/ՀՀ դրամ/	Առաջարկած գին /ՀՀ դրամ/	
				առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	բջջային հեռախոսներ /սմարթֆոններ	«Վերիտաս» ՍՊԸ	12582000	25000000	30000000
		Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի		32400000	-
		«Վեոն Արմենիա» ՓԲԸ		10500000	12600000
		«Նոութբուք Սթոր» ՍՊԸ		11475000	13770000

5. Ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերում հրավերի պահանջների նկատմամբ տեղ գտած անհամապատասխանությունների շտկման մասին

Անուշ Խաչատրյան

5.2 Սահմանված ժամկետում «Վերիտաս» ՍՊԸ-ի, Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի և «Վեոն Արմենիա» ՓԲԸ- ի կողմից հրավերով նախատեսված պահանջների նկատմամբ անհամապատասխանությունները շտկվել են:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

6. Մասնակիցների ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքների մասին

Անուշ Խաչատրյան

6.1 02.07.2020 թվականին Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ի կողմից հայտով առաջարկված «Itel» ֆիրմային բջջային հեռախոսների որպես պաշտոնական սպասարկման կենտրոն հանդիսացող «ԱԴԴ» ՍՊԸ-ին (Ռեմզոն) ուղարկվել է գրություն այն մասին, որ «խնդրում եմ տրամադրել իսկությունը հավաստող փաստաթուղթ, արդյոք Ձեր կազմակերպությունը հանդիսանում է «itel» բջջային հեռախոսների արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնը»: Նույն օրը, «ԱԴԴ» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով հավաստել է, որ վերջինս «հանդիսանում է Itel բջջային հեռախոսների արտոնագրված սերվիս կենտրոն, սակայն հավաստող փաստաթուղթ չունի, անհրաժեշտության դեպքում կարող է գործընկերներին խնդրել տրամադրել այն, բայց

գործընթացը ժամանակատար է /մոտավորապես մեկ շաբաթ/»: Նույն օրը «ԱԴԴ» ՍՊԸ-ն նաև գրությամբ հայտնել է, որ հանդիսանում է «Itel» բջջային հեռախոսների արտոնագրված սերվիս կենտրոնը: 03.07.2020 թվականին «ԱԴԴ» ՍՊԸ-ին ուղարկվել է գրություն այն մասին, որ «խնդրում ենք տրամադրել արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոն հանդիսանալու վերաբերյալ փաստաթուղթ», սակայն գրությանը այդպես էլ արձագանք չի ստացվել:

6.2 08.07.2020 թվականին «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի և «Նոութբուք Սթոր» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկված «Samsung» ֆիրմային բջջային հեռախոսների որպես պաշտոնական սպասարկման կենտրոն հանդիսացող «Մոբայլ Պլազա» ՍՊԸ-ին (Չիպսեթ) ուղարկվել է գրություն այն մասին, որ «խնդրում եմ տրամադրել իսկությունը հավաստող փաստաթուղթ, արդյոք Ձեր կազմակերպությունը հանդիսանում է «Samsung» բջջային հեռախոսների արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնը»: Ի պատասխան գրությանը 09.07.2020 թվականին «Մոբայլ Պլազա» ՍՊԸ-ն գրությամբ տեղեկացրել է, որ «հանդիսանում է Հայաստանում «Samsung» ընկերության պաշտոնական սերվիս կենտրոն, ով իրականացնում է Հայաստանի տարածաշրջանի համար «Samsung» բջջային հեռախոսների երաշխիքային սպասարկում, կից ներկայացնելով հավաստագրի լուսապատճեն:

7.Հանձնաժողովը որոշեց՝

Անուշ Խաչատրյան

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 67-րդ կետով սահմանված պահանջը, մերժել Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը՝ տվյալների իսկության ստուգման արդյունքում իրականությանը չհամապատասխանող հիմքով:

Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, սահմանված ժամկետում գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

7.2«Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի և «Նոութբուք Սթոր» ՍՊԸ-ի ներկայացված տվյալները արձանագրել, որպես իսկությանը համապատասխանող:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

8. Կասեցված բանակցությունները շարունակելու մասին

Անուշ Խաչատրյան

8.1 Կասեցված բանակցությունները կվերսկսվեն 16.07.2020 թվականին ժամը 12:00-ին, ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ ք. Աբովյան, Արզնու խճուղի 10 հասցեում՝ նիստերի դահլիճում: Մասնակիցներին կտրվի 30 րոպե ժամանակ;

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

9 . Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրը, օրը և ժամը հաստատելու մասին

Անուշ Խաչատրյան

9.1 «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/44» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա 16.07.2020 թվականին ժամը 12:00-ին ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ ք. Աբովյան, Արզնու խճուղի 10 հասցեում՝ նիստերի դահլիճում:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Անուշ Խաչատրյան

Անդամներ՝ _____ Յանա Ալեքսանյան

_____ Գագիկ Մաթևոսյան

Քարտուղար՝ _____ Աննա Չոբանյան